

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

Վանաձորի համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի հերթական նիստի՝ կայացած 26.10.2018 թ.

Ք. Վանաձոր

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Վահագն Ավագյանը, Վահե Դոխոյանը, Խորեն Վարդանյանը, Արման Ափինյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Սեյրան Աղաբեկյանը, Արևիկ Լոքյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝ Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արմեն Մատինյանը, Սեյրան Ղամբարյանը

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամ՝

Տիգրան Նազարյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարությանը, Հայկազ Սիմիկյանը, Կարեն Բեկչյանը, Ռոմիկ Մարգարյանը, Սուրեն Կարապետյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը ժամը 10.10-ին նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ նիստին ներկա են ավագանու 25 անդամներ և նիստն իրավազոր է:

(Վանաձորի ավագանու 2018 թվականի 5րդ նստաշրջանի 26.10.2018 թ. ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է

(<https://www.youtube.com/watch?v=s7ocVa3QNt8>հղումով):

Մինչ նիստի օրակարգին անցնելը, նիստը վարողն առաջարկեց քննարկել նախորդ օրը սոցիալական ցանցերում լայն քննարկումների առիթ դարձած խնդիրը, որը վերաբերում էր օրակարգի 9-րդ հարցի 1-ին կետի ա/ ենթակետին, այն է՝ Տիգրան Մեծի պողոտայի թիվ 2/3 հասցեում (Քիմիագործների այգու տարածքի հատված) 0,27035 հա հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով սահմանված կարգով տրամադրելուն: Քննարկման ժամանակ իրենց տեսակետներն արտահայտեցին նաև

ավագանու այն անդամները, ովքեր անմիջական մասնակցություն էին ունեցել սոցիալական ցանցում տեղի ունեցած քննարկումներին:

Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը, պատասխանելով ավագանու անդամների հարցերին, նաև տեղեկացրեց, որ թեև իրավական առումով ոչ մի խոչընդոտ չկա, որպեսզի ավագանին քննարկի տվյալ հարցը և կայացնի որոշում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա են Լոռու մարզպետի և Տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջարկությունները քննարկել օրակարգի 9-րդ հարցի 1-ին կետի ա/ կետը օրակարգից հանելու և լրացուցիչ ժամանակով հանրային քննարկումների հնարավորություն ստեղծելու իրավական լուծումների հնարավորությունը, առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ, իսկ 9-րդ հարցի քննարկման ժամանակ անդրադառնալ նաև 1-ին կետի ա/ կետին:

Նիստը վարողը քվեարկության դրեց օրակարգն ամբողջությամբ:

Կողմ՝ 19, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

2.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

3.Վանաձորի համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

4.Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքի ջեռուցումը կազմակերպելու համար ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին

զեկ.՝ Ա.Օհանյան

5.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /Գր.Հախինյանի անվան երաժշտ. դպրոց/

զեկ.՝ Գ.Բաղյան

6.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /թիվ 30 մանկ./

զեկ.՝ Գ.Բաղյան

7.«Վանաձոր համայնքի թիվ 15 Սուրբ Մարիամ Աստվածածին մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություններ և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

8.Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

9.Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

10.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

11.Ռազմիկ Սրապի Մանուկյանին Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոցի թիվ 4/4ա հասցեում գտնվող բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

12.Վանաձոր համայնքի Քիմիագործների այգին Շառլ Ազնավուրի անվան այգի վերանվանելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

13.Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 12 և 14 շենքերի միջև գտնվող պուրակն անվանակոչելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

14.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը: Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցը վերաբերում էր «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության անդամության վճարին՝ 2 մլն 300 հազար դրամ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, դեմ՝ 4 /Կ.Ղուկասյան, Հ.Այվազյան, Վ.Կոռյան, Ա.Եղիազարյան/, ձեռնպահ՝ 1 /Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում::

2. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցը վերաբերում էր «Փողոցային լուսավորության, լուսաֆորային օբյեկտների համակարգի էներգետիկ ծառայություններ» ծրագրով բյուջեում նախատեսված գումարի ավելացմանը՝ 18 մլն դրամ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին:

- Ձեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Ավագանու անդամ Գայանե Քալանթարյանն առաջարկեց փոփոխություն կատարել նախագծի 2019 թվականի տեղական վճարների դրույքաչափերը սահմանող հավելված 9.1 ա/ կետում և Դաշնամուր ծառայության դիմաց վարձավճարը սահմանել 2500 դրամ՝ նախատեսված 2000-ի դիմաց:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը հաստատված տեսքով, եթե չհաստատվի՝ անդրադառնալ ավագանու անդամի առաջարկին:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, դեմ՝ 4 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Մ.Հովհաննիսյան/, ձեռնպահ՝ 1 /Գ.Քալանթարյան/, ընդունվեց որոշում:

Նախագիծը հաստատված տեսքով հավանության արժանացավ ավագանու կողմից: Նիստը վարողն առաջարկեց ամեն դեպքում լրացուցիչ ուսումնասիրել Գայանե Քալանթարյանի առաջարկը հետագայում դրան անդրադառնալու նպատակով:

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքի ջեռուցումը կազմակերպելու համար ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին

- Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Ձեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

5.ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- Ձեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցը վերաբերում էր Գր.Հախինյանի անվան երաժշտական դպրոցին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 8 /Կ.Ղուկասյան, Հ.Այվազյան, Վ.Կոռյան, Ա.Կարապետյան, Ա.Եղիազարյան, Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ձեռնպահ՝ 1 /Գ.Քալանթարյան/, ընդունվեց որոշում:

6.ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները,

պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- Ձեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցը վերաբերում էր թիվ 30 մանկապարտեզին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 23, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - «Վանաձոր համայնքի թիվ 15 Սուրբ Մարիամ Աստվածածին մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություններ և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

- Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 23, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին:

- Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Համաձայն քննարկումների արդյունքում ձեռք բերված նախնական պայմանավորվածության, նիստը վարողն առաջարկեց առաջնորդվել ավագանու կանոնակարգի 77-րդ հոդվածով և օրակարգի 9-րդ հարցի ա/ կետը, որը վերաբերում էր Տիգրան Մեծի պողոտայի թիվ 2/3 հասցեում (Քիմիագործների այգու տարածքի հատված) 0,27035 հա հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով սահմանված կարգով տրամադրելուն, հանել ավագանու այս նիստի օրակարգից և տեղափոխել ավագանու հաջորդ նիստերի օրակարգ:

Նիստը վարողը ավագանու անդամների հետ մտքերի փոխանակումից հետո, առաջարկեց քվեարկել այս փոփոխությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց առաջարկը:

Նիստը վարողը ընդառաջ գնալով ավագանու անդամ Վահե Կոռյանի, Կարինե Ղուկասյանի և այլոց առաջարկին, այն է՝ 9-րդ հարցի 1-ին կետի ե/ ենթակետում նշված «Ավտոկայանատեղի կազմակերպելու համար (10 տարի ժամկետով)» տողում ժամկետը նշել 5 տարի, առաջարկեց քվեարկությամբ ընդունել առաջարկը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ձեռնպահ՝ 2 /Մ.Հովհաննիսյան, Ա.Գրիգորյան/, ընդունվեց առաջարկը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգի 9-րդ հարցը՝ ընդունված փոփոխություններով:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 2 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան/, ձեռնպահ՝ 1 /Մ.Հովհաննիսյան/, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գների համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, դեմ՝ 2 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան/, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - Ռազմիկ Սրապի Մանուկյանին Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոցի թիվ 4/4ա հասցեում գտնվող բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի Քիմիագործների այգին Շառլ Ազնավուրի անվան այգի վերանվանելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 12 և 14 շենքերի միջև գտնվող պուրակն անվանակոչելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Ավագանու անդամներ Հրաչիկ Ղամբարյանը և Գայանե Քալանթարյանն առաջարկեցին պուրակն անվանակոչել Համերաշխության պուրակ:

Նիստը վարողն առաջարկեց քվերակել առաջարկությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 4 /Հ.Այվազյան, Վ.Կոռյան, Ա.Կարապետյան, Ա.Եղիազարյան/, ընդունվեց որոշում:

14.Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2018 թվականի նոյեմբերի 29-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2018 թվականի նոյեմբերի 29-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 11.00-ն:

Նիստի արձանագրությունը կազմակերպեց
աշխատակազմի քարտուղար



Արթուր Օհանյանը

Արձանագրությունը կազմեց



Հովսեփյանը